Հավելված N227
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի 2019թ.
հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գործարար և ներդրումային միջավայրի բարելավման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիրը՝ (23-32.9-Ղ3-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետը անմիջական ենթակա և հաշվետու է Նախարարին:

1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետի տեղակալը և Բաժինների պետերը:

1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը կամ բաժինների պետերից մեկը:

1.5. Աշխատավայրը

Հայաստան, ք.Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. ապահովում է Հայաստանի Հանրապետությունում միջազգային մակարդակով մրցունակ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորմանն ուղղված քաղաքականության մշակման աշխատանքները.
2. ապահովում է ներդրումների ներգրավման և ներդրումային քաղաքականության մշակումը և միջնաժամկետ վերանայման իրականացումը՝ համագործակցելով համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի հետ,
3. ապահովում է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականության մշակումը, տնտեսական մրցակցության զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ առաջարկություններ է ներկայացնում.
4. ապահովում է առևտրի և ծառայությունների ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակումը.
5. ապահովում է ծառայությունների առևտրի քաղաքականության մշակումը, համակարգում է ծառայությունների շուկաների ազատականացման և ծառայությունների միասնական շուկայի ձևավորման աշխատանքները,
6. ապահովում է ՀՀ ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականության մշակումը և դրա դիտանցման իրականացումը.
7. ապահովում է գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումների մշակումը և իրականացումը.
8. ապահովում է գործարար ու ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից՝ հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանման, քաղաքականության մշակման և առաջարկությունների ներկայացման հետ կապված աշխատանքներ իրականացումը.
9. ապահովում է Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային

զեկույցով գնահատվող ոլորտների ուսումնասիրության և առկա ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման գործընթացը.

10. ապահովում է ՏՀԶԿ «ՕՈՒՆ սահմանակող կարգավորումների» վարկանիշում Հայաստանի Հանրապետության ընդգրկվելը և առաջարկություններ է ներկայացնում վարքանիշում Հայաստանի Հանրապետության դիրքի ամրապնդման և բարելավման ուղղությամբ.

11. ապահովում է ՀՀ-ի գործարար միջավայրը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.

12. ապահովում է ՀՀ-ում կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները.

13. ապահովում է ներդրումների և ներդրողների պաշտպանության ապահովման համար անհրաժեշտ վերլուծությունների, առաջարկությունների տրամադրումը համապատասխան մարմիններին, քաղաքականության մշակումը և դիտանցման իրականացումը,

14. ապահովում է ներդրումները կարգավորող սահմանափակումների վերացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը,

15. ապահովում է ներդրումային ոլորտի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ կապերի հաստատումը, զարգացումը և ներդրումային ոլորտի միջոցառումներին մասնակցությունը,

16. ապահովում է զարգացած և զարգացող երկրների ներդրումային քաղաքականության, ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցների և մոտեցումների վերլուծություն, դրանց հիման վրա համապատասխան եզրակացությունների ու առաջարկությունների ներկայացում,

17. համագործակցելով Նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ՝ ապահովում է ներդրումային միջավայրի գնահատմանն առնչվող դասակարգիչներում Հայաստանի դիրքի բարելավման կամ պահպանման նպատակով համապատասխան քայլերի և առաջարկների ներկայացումը,

18. ապահովում է ներդրողների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների դասակարգումը, վերլուծությունը, արձագանքումը, առաջարկությունների մշակումը և ներկայացումը նախարարության համապատասխան ստորաբաժանումներին, շահագրգիռ պետական մարմիններին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը, ներդրումային հարցերի շուրջ ներդրողների հետ քննարկումների կազմակերպումը,

19. ապահովում է ներդրումային ոլորտի ֆորումների, համաժողովների, խորհրդակցությունների կազմակերպման աշխատանքներ,

20. ապահովում է ՀՀ-ում գործարար միջավայրը կարգավորող այլ գերատեսչությունների կողմից մշակված օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկումը և առաջարկությունների ներկայացումը.

21. ապահովում է ՀՀ էկոնոմիկայի Նախարարության, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից մշակված ռազմավարական փաստաթղթերի նախագծերի քննարկման և առաջարկությունների ներկայացման գործընթացի համակարգումը.

22. ապահովում է ՀՀ-ում գործարար միջավայրի խոչընդոտների բացահայտման և դրանց վերացման նպատակով վերլուծությունների իրականացման գործընթացը.

23. ապահովում է ապրանքային շուկայի մասնակիցների (արտադրող, մեծածախ առևտրի և այլ միջնորդ կազմակերպություններ, մանրածախ առևտրի կազմակերպություններ և սպառողների կազմակերպություններ) զարգացման, համագործակցության համակարգերի մշակումը և ներդնումը.

24. ապահովում է Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներքին շուկայի զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումների համակարգումը.

25. ապահովում է կենցաղային ծառայությունների ոլորտը կարգավորող մեխանիզմների մշակումը.

26. ապահովում է ՀՀ գործարար և ներդրումային միջավայրին առնչվող խնդիրների թեժ գծի

աշխատանքը.

27. ապահովում է գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը խոչընդոտող խնդիրների վերացման ուղղությամբ ստացված առաջարկությունների վերլուծության գործընթացի համակարգումը.

28. ապահովում է իրականացված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ գործարար համայնքին ծանուցումների իրականացումը.

29. ապահովում է հետադարձ կապը գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ կազմակերպում է օրենսդրական փոփոխությունների նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումները վերջինիս հետ.

30. ապահովում է մասնակցություն հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների իրականացմանը.

31. ապահովում է պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ միջազգային վարկային ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.

32. իր իրավասությունների սահմաններում ապահովում է պետական և միջազգային կառույցների հետ համագործակցությունը.

33. ապահովում է միջազգային երկկողմ ներդրումային համաձայնագրերի մշակման աշխատանքները:

34. ապահովում է մտավոր սեփականության պաշտպանության քաղաքականության մշակումը:

Իրավունքները՝

- Պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ հիմնավորումները և փաստաթղթեր Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներքին շուկայի զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումների իրականացման համար
- Պահանջել և ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ՀՀ-ում ապրանքային շուկայի մասնակիցների (արտադրող, մեծածախ առևտրի և այլ միջնորդ կազմակերպություններ, մանրածախ առևտրի կազմակերպություններ և սպառողների կազմակերպություններ) զարգացման, համագործակցության համակարգերի մշակման և ներդնման համար
- Պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն ՀՀ-ում առևտրի և ծառայությունների ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակման համար
- Պահանջել և ստանալ շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ ծրագրերի, ռազմավարությունների, նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական և ուղեցույցերի մշակման աշխատանքների վերաբերյալ
- Պահանջել և ստանալ համապատասխան մարմիններից գործարար միջավայրի բարելավմանը խոչընդոտող խնդիրների վերացման ուղղությամբ անհրաժեշտ տեղեկատվություն
- Ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային զեկույցով գնահատվող ոլորտների ուսումնասիրության և առկա ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ
- Պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն գործարար ու ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից՝ հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանման և քաղաքականության մշակման համար.
- Կազմակերպել քննարկումներ համապատասխան մարմինների և շահագրգիռ

մարմինների ներկայացուցիչների և նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների հետ գործարար համայնքի հետ հետադարձ կապի ապահովմանն ուղղված աշխատանքների, իրավական ակտերի նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների ստացման նպատակով.

• Պահանջել և ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից մասնագիտական կարծիքներ և առաջարկություններ է ՀՀ-ի գործարար միջավայրը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների համար

• Պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն միջազգային վարկային ծրագրերի մշակման նպատակով.

• Պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել ամբողջական տեղեկատվություն և նյութեր հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների համար

• Կազմակերպել պետական և միջազգային կառույցների հետ համագործակցությանն ուղղված համապատասխան մարմնի տարբեր ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ առաջադրված խնդիրների լուծման շուրջ մասնագիտական քննարկումներ

• համագործակցել համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի հետ ներդրումների ներգրավման, քաղաքականության մշակման և միջնաժամկետ վերանայման աշխատանքների շրջանակում,

• պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել ներդրումային ոլորտի ռազմավարական փաստաթղթերի ու իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ անհրաժեշտ հիմնավորումներ,

• ստանալ այլ մարմիններից ներդրումների և ներդրողների պաշտպանության հետ կապված նյութեր, իրավական ակտերի նախագծեր և եզրակացություններ,

• պահանջել ներդրումային ոլորտի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպություններից անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկատվություն,

• պահանջել զարգացած և զարգացող երկրների ներդրումային քաղաքականության և ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցների ու մոտեցումների վերաբերյալ այլ շահագրգիռներ մարմիններից անհրաժեշտ տեղեկատվություն,

• տնօրինել կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման և մտավոր սեփականության պաշտպանության քաղաքականության վերաբերյալ այլ պետական կառույցներից ստացված տեղեկատվական փաթեթները,

• մասնակցել համապատասխան միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումներին և ոլորտին առնչվող հարցերի քննարկմանը,

• ճշգրտել Հայաստանում օտարերկրյա ներդրումների հրապարակումները և ձեռք բերել լրացուցիչ տվյալներ,

• ստանալ համապատասխան շահագրգիռ մարմիններից պարզաբանումներ և բացատրություններ,

• ստանալ այլ շահագրգիռ մարմիններից ամբողջական տեղեկատվական փաթեթ ներդրումային միջոցառումներին և համաժողովներին մասնակցելու նպատակով,

• ստանալ դիվանագիտական կապուղիներով այլ երկրներից տեղեկատվություն ներդրումային քաղաքականությունների, ներդրումների ներգրավման, ներդրումների պաշտպանության համար կիրառվող միջոցների ու մոտեցումների վերաբերյալ

• պահանջել համապատասխան մարմիններից ներկայացնել ներդրումների ներգրավման, գործարար միջավայրի, տնտեսական մրցակցության պաշտպանության, ներդրումային քաղաքականության, ծառայությունների առևտրի վերաբերյալ իրավական ակտերի և դրանց նախագծերի հետ կապված համապատասխան տեղեկատվություն:

Պարտականությունները՝

• մշակել Հայաստանի Հանրապետությունում միջազգային մակարդակով մրցունակ գործարար և ներդրումային միջավայրի ձևավորմանն ուղղված քաղաքականությունը.

• մշակել ներդրումների ներգրավման և ներդրումային քաղաքականությունը և

միջնաժամկետ վերանայման իրականացումը՝ համագործակցելով համապատասխան պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և գործարար համայնքի հետ,

- մշակել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության քաղաքականությունը, ներկայացնել առաջարկություններ տնտեսական մրցակցության զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ.
- մշակել առևտրի և ծառայությունների ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականություն.
- մշակել ծառայությունների առևտրի քաղաքականությունը, համակարգել ծառայությունների շուկաների ազատականացման և ծառայությունների միասնական շուկայի ձևավորման աշխատանքները,
- մշակել ՀՀ ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականությունը և իրականացնել դրա դիտանցումը.
- մշակել և իրականացնել գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ.
- իրականացնել գործարար ու ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից՝ հարկային և մաքսային ոլորտներում խնդիրների վերհանման, քաղաքականության մշակման և առաջարկությունների ներկայացման հետ կապված աշխատանքները.
- ապահովել Համաշխարհային Բանկի «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային զեկույցով գնահատվող ոլորտների ուսումնասիրության և առկա ընթացակարգերի պարզեցման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման գործընթացը.
- ապահովել ՏՀԶԿ «ՕՈՒՆ սահմանակող կարգավորումների» վարկանիշում Հայաստանի Հանրապետության ընդգրկվելը և առաջարկություններ է ներկայացնում վարքանիշում Հայաստանի Հանրապետության դիրքի ամրապնդման և բարելավման ուղղությամբ.
- ապահովել ՀՀ-ի գործարար միջավայրը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները.
- ապահովել ՀՀ-ում կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները.
- ապահովել ներդրումների և ներդրողների պաշտպանության ապահովման համար անհրաժեշտ վերլուծությունների, առաջարկությունների տրամադրումը համապատասխան մարմիններին, քաղաքականության մշակումը և դիտանցման իրականացումը,
- ապահովել ներդրումները կարգավորող սահմանափակումների վերացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը,
- ապահովել ներդրումային ոլորտի հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ կապերի հաստատումը, զարգացումը և ներդրումային ոլորտի միջոցառումներին մասնակցությունը,
- ապահովել զարգացած և զարգացող երկրների ներդրումային քաղաքականության, ներդրումների ներգրավման համար կիրառվող միջոցների և մոտեցումների վերլուծություն, դրանց հիման վրա համապատասխան եզրակացությունների ու առաջարկությունների ներկայացում,
- համագործակցելով Նախարարության համապատասխան ստորաբաժանման հետ՝ ապահովել ներդրումային միջավայրի գնահատմանն առնչվող դասակարգիչներում Հայաստանի դիրքի բարելավման կամ պահպանման նպատակով համապատասխան քայլերի և առաջարկների ներկայացումը,
- ապահովել ներդրողների կողմից բարձրացված հարցերի և խնդիրների դասակարգումը, վերլուծությունը, արձագանքումը, առաջարկությունների մշակումը և ներկայացումը նախարարության համապատասխան ստորաբաժանումներին, շահագրգիռ պետական մարմիններին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը, ներդրումային հարցերի շուրջ ներդրողների հետ քննարկումների կազմակերպումը,
- ապահովել ներդրումային ոլորտի ֆորումների, համաժողովների, խորհրդակցությունների կազմակերպման աշխատանքներ,
- ապահովել ՀՀ-ում գործարար միջավայրի

մշակված օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկումը և առաջարկությունների ներկայացումը.

- ապահովել ՀՀ էկոնոմիկայի Նախարարության, ինչպես նաև այլ գերատեսչությունների կողմից մշակված ռազմավարական փաստաթղթերի նախագծերի քննարկման և առաջարկությունների ներկայացման գործընթացը.
- ապահովել ՀՀ-ում գործարար միջավայրի խոչընդոտների բացահայտման և դրանց վերացման նպատակով վերլուծությունների իրականացման գործընթացը.
- ապահովել ապրանքային շուկայի մասնակիցների (արտադրող, մեծածախ առևտրի և այլ միջնորդ կազմակերպություններ, մանրածախ առևտրի կազմակերպություններ և սպառողների կազմակերպություններ) զարգացման, համագործակցության համակարգերի մշակումը և ներդնումը.
- ապահովել Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներքին շուկայի զարգացմանն ու կարգավորմանն ուղղված միջոցառումների համակարգումը.
- ապահովել կենցաղային ծառայությունների ոլորտը կարգավորող մեխանիզմների մշակումը.
- ապահովել գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը խոչընդոտող խնդիրների վերացման ուղղությամբ ստացված առաջարկությունների վերլուծության գործընթացը.
- ապահովել իրականացված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ գործարար համայնքին ծանուցումների իրականացումը.
- ապահովել հետադարձ կապը գործարար համայնքի հետ, մասնավորապես՝ օրենսդրական փոփոխությունների նախագծերի և բարեփոխումներին միտված առաջարկությունների քննարկումները վերջինիս հետ.
- ապահովել մասնակցություն հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների իրականացմանը.
- ապահովել պետական կառավարման շահագրգիռ մարմինների հետ համատեղ միջազգային վարկային ծրագրերի մշակման և իրականացման աշխատանքները.
- ապահովել պետական և միջազգային կառույցների հետ համագործակցությունը.
- ապահովել միջազգային երկկողմ ներդրումային համաձայնագրերի մշակման աշխատանքները:
- մշակել մտավոր սեփականության պաշտպանության քաղաքականությունը :

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձառություն

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիտորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Կոնֆլիկտների կառավարում
4. Ժամանակի կառավարում
5. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
6. Փաստաթղթերի նախապատրատում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի մեկ ոլորտի համար իրավասու կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: